



**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ԳԵՂԱՐՔՈՒՆԻՔԻ ՄԱՐԶՊԵՏ
ԿԱՐԳԱԴՐՈՒԹՅՈՒՆ**

« 27 » սեպտեմբերի 2017 թ.

N 262 -Ա

«ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԳԵՂԱՐՔՈՒՆԻՔԻ ՄԱՐԶԻ ՎԱՐԴԵՆԻԿԻ Ա.ՕՀԱՆՅԱՆԻ ԱՆՎԱՆ N2 ՀԻՄՆԱԿԱՆ ԴՊՐՈՑ» ՊԵՏԱԿԱՆ ՈՋ ԱՌԵՎՏՐԱՅԻՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅԱՆ ՏՆՕՐԵՆ ՍԵՎԱԴՂԱ ՎԱՆԻԿԻ ԳԱՓՈՅԱՆԻՆ ԺԱՄԱՆԱԿԱՎՈՐ ԱՆԱՇԽԱՏՈՒՆԱԿՈՒԹՅԱՆ ՄԵՋ ՀԱՄԱՐԵԼՈՒ ԵՎ ՏՆՕՐԵՆԻ ԼԻԱԶՈՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԵՎ ՊԱՐՏԱԿԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԻՐԱԿԱՆԱՑՈՒՄԸ ՄԱՆՈՒԿ ԳՈՒՐԳԵՆԻ ՍԱՖԱՐՅԱՆԻՆ ՎԵՐԱՊԱՇԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության աշխատանքային օրենսգրքի 5-րդ հոդվածի 1-ին և 3-րդ մասերի, 118-րդ հոդվածի 1-ին և 2-րդ մասերի, «Պետական ոչ առևտրային կազմակերպությունների մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 14-րդ հոդվածի 1-ին մասի, Հայաստանի Հանրապետության Նախագահի 1997 թվականի մայիսի 6-ի ՆՀ-728 հրամանագրի 1.6-րդ կետի, Հայաստանի Հանրապետության կառավարության 2011 թվականի հուլիսի 14-ի N 1024-Ն որոշման N 2 հավելվածի 1-ին և 5-րդ կետերի, Հայաստանի Հանրապետության կառավարության 2002 թվականի հուլիսի 25-ի N 1392-Ն որոշման N 3 հավելվածի 69-րդ կետի դրույթներով և հիմք ընդունելով Սևադա Վանիկի Գափոյանի դիմումը՝

Կարգադրում եմ՝

1. «Հայաստանի Հանրապետության Գեղարքունիքի մարզի Վարդենիկի Ա.Օհանյանի անվան N 2 հիմնական դպրոց» պետական ոչ առևտրային կազմակերպության տնօրեն Սևադա Վանիկի Գափոյանին, սրտի վիրահատություն իրականացնելու համար 2017 թվականի հոկտեմբերի 2-ից համարել ժամանակավոր անաշխատունակության մեջ:

2. «Հայաստանի Հանրապետության Գեղարքունիքի մարզի Վարդենիկի Ա.Օհանյանի անվան N2 հիմնական դպրոց» պետական ոչ առևտրային կազմակերպության տնօրենի լիազորությունների և պարտականությունների իրականացումը, մինչև Սևադա Վանիկի Գափոյանի աշխատանքի մեջ համարվելը, ժամանակավորապես վերապահել «Հայաստանի Հանրապետության Գեղարքունիքի մարզի Վարդենիկի Ա.Օհանյանի անվան N2 հիմնական դպրոց» պետական ոչ առևտրային կազմակերպության զինղեկ Մանուկ Գուրգենի Սաֆարյանին /առանց տնօրենի պաշտոնի համարում համարված աշխատավարձի վճարման/:

3. Սույն կարգադրության մեջ է մտնում ստորագրման պահից:

ՄԱՐԶՊԵՏ՝



ԿԱՐԵՆ ԲՈԹՈՅԱՆ